

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Խմբագրութիւնը ընդունում է ամեն լեզուով.
Խմբագրութիւնները համար ձևաբան են
իրաւաբանութիւնը բացի 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՅՎԱԾ Է ԿԵՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՆՈՒՅԻՆ ԼՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մշակի վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը ՎՅՑ ռուբլի. մէկ ամսվայ
նը—մէկ ռուբլի: Ամերկայի բաժանարարները պէտք է վճարեն կես տարվայ համար 3 ռուբլի,
Եւրոպայի բաժանարարները—16 ֆրանկ:

Կայտարարութիւնները «ՄՇԱԿ»-ին գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից. TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Խմբագրութիւնները ընդունում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲԱՅՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց շարժման ընդարձակումը.—Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական գրքեր չունենք.
Ժողովրդական ներկայացում Բաթումում. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒՍԳԻՒՆ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Թէ լեզուն և թէ ուղղութիւնը:

ԿԱՆԱՆՑ ԵՄԲԹԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ

Կանանց շարժման պաշտպանները և
համակրողները առանձին հաճոյքով և ե-
րախտագիտութեամբ պէտք է յիշեն ներ-
կայ յունիս ամիսը: Կանանց համաշխար-
հային միջազգային ժողովը, որ տե-
ղի ունեցաւ Լոնդոնում, Անգլիայի առա-
ջին միջնորդ լորդ Սոլսբերիի ոգևորված
ձառը լորդերի պալատում, անգլիական
մամուլի և հասարակութեան
համակրական ցոյցերը կանանց հարցին
տուրն լայն, սոցիալական նշանակութիւն
և դարձին նրա վերջնական բաւարար
լուծումը գործնական անհրաժեշտութիւն
Միջազգային ժողովը իր բազմաթիւ զե-
ւեւցումներով և հետաքրքրական ճառե-
րով ապացուցեց, որ կանանց հարցը սերտ
կապով կապված է մեր դարի խոշոր
հասարակական հարցերի հետ և նա կազ-
մում է հասարակական առաջադիմութեան
ամենակական ծիւղերից մէկը:

Ճիշդ է, անգլիական լորդերի պալատում

դեռ այնքան աջողութիւն չունեցաւ կա-
նանց իրաւունքների ընդարձակման հար-
ցը, որ ստանար պալատի ձայների մեծա-
մասնութիւնը, բայց և այնպէս նա ար-
դէն գրաւել է 88 ձայն, որ մեծ թիւ է
անգլիական հնացած այդ պալատի մէջ:
Լոնդոնի բազմաթիւ ինքնավարութիւնը
համարում է ժամանակակից և նպատա-
կայարմար թողարկել կանանց, որ նրանք
իրաւունք ունենան մասնակցելու քաղա-
քային խորհուրդներում: Համայնքների ժո-
ղովը ընդունեց այդ որոշումը, իսկ լորդերի
պալատը մերժեց: Կանանց իրաւունքների
պաշտպան հանդիսացաւ լորդ Սոլսբերի, որ
իր երկար ճառի մէջ ասաց, ի միջի այլոց,
հետեւեալը. «Քաղաքային նոր խորհուրդ-
ների գլխաւոր պարտաւորութիւններից
մէկը պէտք է լինի հայրթայթիւ աշխատող
ղաւթակարգին և ժամանակին և յարմար բնա-
կարաններ: Դա ապագայ կառավարու-
թեան ամենահրատապ և կարեւոր գործե-
րից մէկը պէտք է լինի: Այդ մարդասի-
րական խնդրի լուծման համար շատ կա-
րեւոր է կանանց մասնակցութիւնը: Նրանք
մեր տղամարդկանցից աւելի են մօտ աշ-
խատող խաւերին: Կանայք զգում են այն
չարիքի ծանրութիւնը, որ ճնշում է աշ-
խատող կանանց և աւելի մարդասիրաբար
են վերաբերվում գործին, քան մենք: Կա-
նանց հեռացնելով քաղաքային խորհուրդ-
րաներից, կը հեռացնենք ազնիւ և բա-
րեխիղճ գործողների մի տարրը:
Կանանց հարցը Եւրոպայում այնպիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Թէ՛ ԼԵՋՈՒՆ ԵՒ Թէ՛ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Մշակը կարեւոր նշանակութիւն է տուել
այն հանգամանքին, որ Կ. Պոլսի հայոց գրա-
կան շրջաններում այժմ շատ են խօսում ուղ-
ղութիւնների մասին: Դժգոհութիւնը աւելի քան
ախնայաւ է: Թիւրքաւայր զգացել է ֆրանսիա-
կան կրթութեան պակասութիւնը, մի բան, որ
իրանք, ֆրանսիացիներն էլ չեն ուրանում, զգա-
ցել է թէ ֆրանսիական մամուլի տակաւնները
ինչպէս փչացրել են ընթերցող հասարակութեան
ճաշակները: Եւ ահա ֆրանսամոլութեան հետե-
ւանները մեր աչքի առաջ են. թիւրքաւայր
գործնական մարդ չէ, կենսիկ մէջ չունի պատ-
րաստութիւն, նրա դպրոցը միայն վաճառականի
գրադրի ասպարէզ է բաց անում. իսկ գրակա-
նութեան, մանաւանդ վիպական գրականու-
թեան մէջ, ուղղութեան արժանի ոչ մի երե-
ւոյթ:

Չարաչար սխալված կը լինէինք, եթէ ենթա-
դրէինք, թէ այդ դժգոհութիւնը մի յանկարծա-
կի բունկում է, առանց պատճառի և պատրաս-
տութեան: Ոչ: Բոսֆորի ափերում մինչև այժմ
ֆրանսիական հոգին էր տիրում, բայց վերջին
տարիներս Կ. Պոլսի երիտասարդութիւնը ճա-

ծաւալ է ստացել, նրա լայն իրաւական
լուծումը այնպիսի անհրաժեշտութիւն է
դարձել, որ այժմ հասարակական կարիքի
առաջ ոչ թէ կանանց ազատութեան
հարցն է օտարառի թւում, այլ այն, որ
այդ ազատութիւնը մինչև այժմ դեռ տե-
ղի չունի իր ամբողջ ծաւալով: Կանանց
միջազգային ժողովի աջողութիւնը Լոնդո-
նում ցոյց է տալիս, որ մօտ է կանանց
հարցի վերջնական լուծումը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐՔԵՐ ԶՈՒՆՆԵՐ

Մշակի վերջին համարներից մէկին առաջ-
նորդում մատնացցւց է արված մեր կենսիկ
տխուր երևոյթներից մէկը—ժողովրդի անընթեր-
ցաւորութիւնը: Բայց իսկապէս ճիշդ է, որ մեր
ժողովուրդը անընթերցաւոր է: Մեզ թւում է,
որ եթէ մեր ժողովուրդը ընդ է պարագում ըն-
թերցանութեամբ, դրա մի պատճառն էլ այն է,
որ մենք դուռ ժողովրդական գրքեր չունենք:
Արդեօք շատ կան մեղանում այն տեսակ գրքեր,
որ գիւղացին կարդայ և հասկանայ: Այդ
տեսակ գրքեր շատ ընդ կան, բայց այդ ընթեր-
ցաւորութիւնը էլ է:

Մեր գիւղացիք 60—70 կոպէկ են վճարում
«Քեարամի» և Ասլիի հէքիթը գրքին և կար-
գում են: Ի՞նչ է դրա պատճառը: Անկասկած
այդ գրքի հակահային լինելը: Մեր գիւղացին
չէ խնայում և մի ամբողջ օրվայ վարձը տալիս
է մի գրքի: Միթէ դրանից յետոյ կարելի է նը-
րան մեղադրել անընթերցաւորութեան մէջ:
Նախ քան մեղադրել, ցոյց տուէք մեզ այն
գրքերը, որոնք հակահային, մատչելի են ժողո-
վրդին, բայց ժողովուրդը չէ գնում և չէ կար-
գում:

Կրկնում ենք, դուռ ժողովրդական գրքեր մենք
ընդ ունենք, չափազանց ընդ: Նոյն իսկ մեր այն
գրքերը, որոնք հրատարակված են յատուկ ժո-
ղովրդի համար և որոնց ճակատին գրված է
«ժողովրդական գրադարան», հանրամատչելի
զրոյց» և այլ այս տեսակ խօսքեր—այդ գրքերն
իսկ ընդունվին մատչելի չեն ժողովրդին: Մենք
ունենք ժողովրդի համար հրատարակված գրքե-
րի մի անպիսի քանակութիւն, բայց նրանցից
նրն է համապատասխանում գիւղացու հակա-
ցողութեանը:

Օրինակներ. «Վերջապէս» նա խօսեց՝ ըստը-
ված սրտով՝ դէն մեղով իրանից կերակրի ափ-

մէն. «Խարդախներ, դաւաճաններ, նախատինք
ձրանսխայն: Այս նախադասութիւնը, որ տրպ-
ված է մեր «ժողովրդական» հրատարակութիւն-
ներից մէկում, կարող է արդեօք գիւղացին հաս-
կանալ: Ձէ կարող, որովհետեւ բառերի մեծ մա-
սը նրան անյայտ է: Մինչևեւ կարելի էր այդ
նախադասութիւնը կազմել այնպէս, որպէս զի
հասկանալի լինէր: Փոխանակ «բորբոքված սըր-
տով» կարելի էր ասել «բարկացած», կամ մի
ուրիշ խօսք. փոխանակ «դէն մեղով» կարե-
ւի էր ասել «դէն չարտելով», փոխանակ
«կերակրի ափսէ»—«կերակրի աման», փոխա-
նակ «խարդախներ»—«ստախոսներ», փոխա-
նակ «նախատինք»—«ստախոսներ»: Եւ դուքս կը
դար գիւղացուն հասկանալի մի միտք, առանց
գրականական լեզուն զննված լինելու: Եւ,
եթէ ամեն մի ժողովրդական գիրք կազմող
վարվէր այսպէս, այսինքն կազմվելու ժամանակ
կարելոյն չափ խուսափէր գիւղացուն անհաս-
կանալի խօսքերից—անկասկած այդ տեսակ
հակահային գրքեր գիւղացին և՛ կը գնէր, և՛ կը
կարդար: Աւելի լաւ է, որ ոճը ոչ այնքան բանաս-
տեղծական լինի, աւելի լաւ է, թող լինի ինքնա-
թիւնը ոչ այնքան բառացի, հարադատ լինի (ի
հարկէ դարձեալ ոճի վերաբերմամբ), միայն թէ
գիրքը հակահային և մատչելի լինի: Այս պէտք
է լինի, մեր կարծիքով, ժողովրդական գիրք
կազմելու հիմնական կանոնը:

Իսկ առ այժմ, քանի որ ժողովրդական գրքեր
համարեա թէ չունենք, անիրաւացի է միանգա-
սայ մեղադրել ժողովուրդը անընթերցաւորու-
թեան մէջ: Եթէ կայ մէկը, որ արժանի է մե-
ղադրանքի—դա անկասկած մեր ինտելիգենցիան
է, որ այնքան ընդ է հոգում ժողովրդի մէջ ըն-
թերցաւորութիւն տարածելու համար:

Ա. Ամիրխանյ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԲԱՅՈՒՄՈՒՄ (Նամակ Բաթումից)

Մի երկու շաբաթ առաջ հայ դերասաններից
մի քանիսը, տեղական թատրոններին հետ,
ժողովրդական ներկայացում տուին, չափազանց
պակասեցրած գրքերով: Ժողովրդական ներկա-
յացում, հայերէն լեզուով—առաջին անգամն է:
Խաղացին «Մեծապատիւ Մուրադբեկներ»:

Բաթումի բանւորների մեծ մասը հայեր են,
զրիտաւորապէս թիւրքաւայր: Թանրաբեւոյնում
լինելով՝ գործարանական աշխատանքով, հայ
բանւորը հեռու է թէ մտաւոր զարգացումից և
թէ էտեղեղական բաւականութիւններից: Ժո-

ներ: Մենք դէմ ենք եղել դրան, քանի որ լե-
զուն փայտացնողը արհեստականութիւնն է:
Ռուսահայերը, ասել ենք մենք, իրանց լեզուի
հարստութիւնը որոնում են ոչ թէ գրաբարի
մէջ, ինչպէս արեւմտեան հայերը, այլ ժողո-
վրդի կենդանի խօսքի մէջ: Գրաբարագիտութիւ-
նը մեր մէջ չէ զարգանում. գրաբարով ղեկա-
վարվող մեր մէջ ժողովրդականութիւնն է ստա-
նում իր լեզուով: Մենք չենք ուզում մարգա-
րէնաւ թէ երկու ուղղութիւններից՝ որն է ա-
ւելի առողջ, աւելի կենսունակ: Կարծում ենք
որ ապագան ցոյց կը տայ այդ բանը. և եթէ
այժմ ռուսահայերի լեզուն թերութիւններ շատ
ունի, այդ շատ բնական երևոյթ է, որովհետեւ
այդ լեզուն պատրաստի ոճեր, բառեր և դար-
ձումներ չէ վերցնում գրաբարից, որ միանո-
գամայն ընդ միշտ դատաւարութեամբ է մեղաւոր-
վեալ, այլ ժողովրդական բարբառներից, կեն-
դանի աղբիւրներից, որոնք առ ամբողջ հու-
թեւ են տալիս, դրանց մշակութիւնից, դրանց
մարտնչուց և մի ընդհանուր կանոնի ենթարկե-
լուց կը ստեղծվի, հաւանաբար ենք, մի
ձկուն, առողջ լեզու: Ամենապատիւ յատուկու-
թիւնը, որ այդ լեզուին մի լաւ ապագայ է
խոստանում, պարզ ու թիւն է, մի բան,
որից, խոստովանել պէտք է, ազատ չէ արեւը-
տեան հայերի լեզուն: Ինչու մենք այնքան դը-
ժուար ենք հակառուստ արեւմտեան հայերին,
ինչու շատ գրուածքներ մեզ վրա մի տալու,
անձանթ լեզուով գրածի տպաւորութիւնն են

Կ. ՓՈԼԻՍ: Սուղթանը հեռադրով սրտանց
որհաւորել է Միւսնին և Ալէքսանդրին, որոնք
ստաւախանեցին ջերմագին շնորհակալութիւն-
քով:
